ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՄՈԼԴՈՎԱՅԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

IFAD
Investing in rural people

SHEN

Սույն հրապարակումը պատրաստվել և հրատարակվել է Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (IFAD) աջակցությամբ, «Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում» ծրագրի շրջանակում: Այստեղ տեղ գտած բովանդակությունն ու կարծիքները հեղինակներինն են և անպայմանորեն չեն արտացոլում IFAD-ի պաշտոնական տեսակետը:

© Բովանդակային բոլոր իրավունքներն ու պարտականությունները պատկանում են բացառապես հեղինակներին:

IFAD
Investing in rural people

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1

Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ղազախստանի գյուղատնտեսական արտադրողների միջև համատեղ գործող խմբերի հաջողությունների և մարտահրավերների համեմատական վերլուծությունը տեղեկատվական նյութ է, որը կազմվել է չորս երկրներում իրականացված հետազոտությունների արդյունքում: Հետազոտություններն անց են կացվել Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) կողմից ֆինանսավորվող «Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում» ծրագրի շրջանակում:

Չորս երկրներում իրականացված հետազոտությունների հիմնական նպատակն էր բուսաբուծության ոլորտում գործող գյուղ. մթերք արտադրողների միավորումների, մասնավորապես կոոպերատիվների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը: Նպատակ էր դրվել գնահատել կոոպերացիայի ոլորտում առկա ձեռքբերումներն ու հաջողությունները, ինչպես նաև վեր հանել դրանց կայուն գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող գործոնները՝ կոոպերատիվների խթանմանն ուղղված հետագա գործողություններն առավել արդյունավետ և թիրախային դարձնելու նպատակով:

Սույն հետազոտությունը նպատակ ունի արժեքավոր տեղեկատվություն և վերլուծական նյութ տրամադրել համագործակցող չորս երկրներում գյուղատնտեսական արտադրողների միջև միավորումների ձևավորման և զարգացման վերաբերյալ, որը կնպաստի յուրաքանչյուր երկրում խթանող քաղաքականությունների մշակմանն ու բարելավմանը: Հետազոտությունը մեթոդաբանության իմաստով հիմնված էր ժամանակակից տեսական և կիրառական մոտեցումների վրա՝ շեշտը դնելով դաշտային հետազոտությունների այնպիսի մեթոդների վրա, ինչպիսիք են քանակական հարցումները, շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցներն ու ֆոկուս խմբային քննարկումները: Հետազոտությունն ուներ համապարփակ բնույթ՝ պայմանավորված հարցումների մասնակիցների լայն շրջանակով, ինչը թույլ է տվել բացահայտել կոոպերացիայի ստեղծած հնարավո-

ությունները, ինչպես նաև վեր հանել հիմնական մարտահրավերները և խնդիրները:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ մեթոդների համադրությամբ.

- քանակական հարցումներ կոոպերատիվներին անդամակցող և չանդամակցող ֆերմերների հետ,
- ֆոկուս խմբային քննարկումներ կոոպերատիվներին անդամակցող և չանդամակցող ֆերմերների հետ,
- դեպքի ուսումնասիրություն,
- անհատական հարցազրույցներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են առաջնային տվյալների հավաքագրման քանակական և որակական մեթոդներ, կատարվել է նաև դեպքի ուսումնասիրություն:

Հայաստանում հարցումը իրականացվել է 8 մարզերի 20 գյուղերում: Գյուղական համայնքների ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով տարածաշրջանում բուսաբուծական գործունեության տարածված լինելը, ինչպես նաև գործող կոոպերատիվների առկայությունը: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 300 հոգի, որից 100-ը ներկայումս անդամակցում են որևէ կոոպերատիվի, իսկ 200-ը կոոպերատիվի անդամներ չեն: Հետազոտության ընթացքում իրականացվել է 10 ֆոկուս խմբային քննարկում: Քննարկումները անց են կացվել 6 մարզերի 10 տարբեր գյուղերում: Կոոպերատիվների իրականացրած գործունեության մասին պատկերացում կազմելու նպատակով կատարվել է նաև դեպքի ուսումնասիրություն, որի համար ընտրվել է Տավուշի մարզում գործող «Բերդավան» պտղաբուծական սպառողական կոոպերատիվը:

Վրաստանում հետազոտություններն իրականացվել են 100 գյուղերում, ընդգրկված են եղել 313 պատասխանողներ: Նրանցից 282-ը կոոպերատիվի անդամներ էին (թվով 88 կոոպերատիվներից), 38 մասնակիցների հետ (20 կոոպերատիվներից) իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ, 12-ը (4 կոոպերատիվներից) մասնակցել են դեպքի ուսումնասիրությանը, ինչպես նաև իրականացվել են 7 անհատական հարցազրույցներ:

Ղազախստանում իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ 2 շրջաններում, ընդ որում Սայրամ շրջանում 4-ը՝ 41 մասնակիցներով և Թուլկաբաս շրջանում՝ 6-ը՝ 70 մասնակիցներով:

Մոլդովայի Հանրապետությունում կիսաձևայնացված հարցաթերթիկներով հարցումներ են անց կացվել կոոպերատիվների 50 անդամների, 43 նախկին անդամների և 45 ոչ անդամների շրջանում: Որակական տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել են հարցումներ 10 ֆոկուս խմբերի հետ, որոնցում ներգրավված էին վերը նշված կոոպերատիվների անդամները, նախկին անդամները, ինչպես նաև կոոպերատիվներին չանդամակցող մարդիկ երկրի տարբեր մարզերից: Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, աջակցության և զարգացման ոլորտում աշխատող 19 պատասխանատուների հետ անց են կացվել անհատական հարցազրույցներ, որի միջոցով հավաքագրվել են Մոլդովայում կոոպերատիվների ձևավորման, զարգացման մասին ընդհանուր տեղեկություններ, ինչպես նաև վեր են հանվել դրանց գործունեության ընթացքում առաջացող հիմնական խնդիրներն ու ռիսկերը և առաջարկվել են հնարավոր լուծումներ:

Չնայած հետազոտությունների ընթացքում կոոպերատիվների գործունեության առնչությամբ բարձրաձայնված բոլոր դժվարություններին ու խնդիրներին՝ մասնագետները և հենց կոոպերատիվների անդամները լավատես են կոոպերացիայի հետագա զարգացման հարցում:

Թեև ծրագրի նպատակներից ելնելով հետազոտությունների առանցքում բուսաբուծության ոլորտն էր, ուսումնասիրության առարկա են դարձել նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են աղքատությունը, կանանց իրավունքների պաշտպանությունը, կլիմայի փոփոխությունը և բնապահպանական խնդիրները:

Սույն հետազոտությունն ապահովեց տեղեկատվական բազա՝ հասկանալու համար, թե ինչպես են կոոպերատիվները նպաստում արդյունավետության բարձրացմանը, ռեսուրսների մոբիլիզացմանը, շուկայի հասանելիության խնդիրների լուծմանը և թե ինչպես լավագույնս կիրառել կոոպերացիայի փորձառությունը՝ նպաստելու փոքր ֆերմերների ներառմանը արժեշղթաներում:

Հետազոտության արդյունքներով տեղեկատվություն հավաքագրվեց ԳՀՄՀ, այլ շնորհատուների և կառավարությունների կողմից աջակցություն ստացած կոոպերատիվների և այլ միավորումների վերաբերյալ, վերլուծություն կատարվեց աջակցության ձևերի, մոտեցումների, ինչպես նաև կոոպերացիային նպաստող սոցիալ-տնտեսական, բնապահպանական գործոնների վերաբերյալ:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԽԹԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Կոոպերատիվների ձևավորման և զարգացման վրա ազդող քաղաքականության շրջանակի նույնականացումը հնարավորություն է ընձեռում գնահատելու խթանող քաղաքականության գործիքները և դրանց արդյունավետությունը:

Կառավարության որդեգրած քաղաքականությունը կարող է նպաստել կամ խոչընդոտել կոոպերատիվների անկախ զարգացմանը: Կոոպերատիվների զարգացումը խթանելու համար կառավարությունը տարատեսակ լծակներ կարող է կիրառել: Խթանող միջոցառումները կարելի է բաժանել երկու խմբերի.

- ուղղակի աջակցության միջոցառումներ, որոնք իրագործվում են ուսուցողական, խորհրդատվական, ինչպես նաև սուբսիդավորման և դրամաշնորհային ծրագրերի միջոցով
- անուղղակի աջակության միջոցառումներ, ինչպիսին է բարենպաստ իրավակարգավորման դաշտի ստեղծումը:

Կոոպերատիվների խթանումը նախատեսված է բոլոր չորս երկրներում՝ որպես քաղաքականության գործիք, որը նպատակաուղղված է լուծելու մասնատված, փոքր հողակտորների վրա գյուղատնտեսության վարման անարդյունավետության հարցը, բարելավելու գյուղացիական տնտեսությունների մրցունակությունը, հաղթահարելու աղքատությունը, խթանելու գյուղատնտեսական արտադրողների մուտքը շուկաներ և այլն:

2 Մոլդովա

Վերջին տասնամյակում հաստատված և գյուղատնտեսության ոլորտում իրագործված ռազմավարական պլանավորման մի շարք փաստաթղթեր լուրջ ազդեցություն ունեցան Մոլդովայում ֆերմերների միավորման գործընթացի վրա:

Մոլդովայում գյուղական զարգացման համապարփակ ծրագրի մշակման առաջին փորձերը կատարվել են 2000-2005թթ: Այնուամենայնիվ, ինչպես մի շարք այլ ռազմավարական օրենսդրական գործիքների կիրառմանը այդ ժամանակներում, այս ծրագրի իրականացմանը նույնպես խոչընդոտում էր ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը: Ծրագիրը, թիրախավորելով գյուղական զարգացման մի շարք ուղղություններ, թերևս չուներ հստակ առաջնահերթություններ, ինչն էլ իրականացման ընթացքում հանգեցնում էր շփոթմունքների և խեղաթյուրումների:

01.10.2007թ. կառավարության թիվ 1075 որոշմամբ ընդունված հողերի կոնսոլիդացիայի մասին կարգավորումը սահմանել է մի քանի հիմնական մեթոդներ, որոնք պետք է կիրառվեին հողերի կոնսոլիդացիայի գործընթացում: Այդ մեթոդներից մեկն էլ հողօգտագործողների միավորումների ձևավորումն էր, որը կարող էր լինել հողը համատեղ մշակելու վերաբերյալ հողօգտագործողների միջև կնքված համաձայնագրի ձևով կամ երրորդ անձի կողմից հողի մշակության ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման ձևով՝ այդպիսով պայմաններ ստեղծելով գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների ստեղծման համար: Հետագայում կյանքը ցույց տվեց, որ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվները, չկառավարվելով ժողովրդավարական սկզբունքներով, տնօրինվում էին որպես վարձակալված հողակտորներ, այլ ոչ թե որպես գյուղատնտեսական արտադրողների միավորումներ:

2008թ. մարտի 11-ին կառավարության թիվ 282 որոշմամբ հավանության արժանացած 2008-2015թթ ագրոարդյունաբերական համալիրի կայուն զարգացման ազգային ռազմավարությամբ նպատակադրվեց իրագործել հողերի կոնսոլիդացիա և որպես միջոց ընտրվեց մարքեթինգային կոոպերատիվների ստեղծմամբ գյուղատնտեսական արտադրողների ներգրավումը արժեշղթաներում:

2013թ. կառավարությունը մեկնարկեց գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված խմբերին հասցեագրված ֆինանսական աջակցության առաջին ծրագիրը: Համաձայն վերջինիս՝ ֆերմերները կարող էին օգտվել խաղողի այգիների հիմնման համար տրամադրվող սուբսիդիաներից, եթե դրանք լինեին.

ա) կոմպակտ,

բ) ստեղծված լինեին առնվազն 5 տարբեր արտադրողների միավորման արդյունքում,

գ) իրականացնեին խաղողի մեծաքանակ արտադրություն ինչպես վերամշակման, այնպես էլ արտահանման նպատակով,

դ) ունենային առնվազն 25 հա հարթավայրային այգիներ կամ 12 հա թեքությունների վրա:

Այս դեպքում գյուղատնտեսական արտադրողները կարող էին յուրաքանչյուր հեկտարի հաշվով կառավարությունից ստանալ 10 հազար լեյ (800 ԱՄՆ դոլար) սուբսիդիա:

Նույն թվականին կառավարությունն իր սուբսիդավորման քաղաքականությամբ սահմանեց բիզնես գործունեություն ծավալող կոոպերատիվներին հասցեագրված ֆինանսական աջակցության առաջին գործիքը: 2013թ. և 2014թ. կառավարության կողմից 26.02.2013թ. հաստատված N 152, և 24.02.2014թ.N 135 որոշումներով ընդլայնված աջակցություն էր առաջարկվում խաղողի այգիների մշակությամբ, ինչպես նաև հատուկ պաշտպանվող տարածքներում գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկատիրական կոոպերատիվներին: Սուբսիդավորման ենթակա ուղղություններից մեկն էլ կոոպերատիվների կողմից հետբերքահավաքային ենթակառուցվածքներում ներդրումների իրականացումն էր:

Սկսած 2015թ-ից սուբսիդավորման վերոնշյալ քաղաքականությունը վերանայվեց 20.12.2013թ. թիվ 312 օրենքի դրույթների կատարման նպատակով: Այսպիսով, արտադրող խմբերի ստեղծման և դրանց գործունեության խթանման նպատակով ստեղծվեց առանձին ֆինանսական աջակության գործիք: Արտադրողների խմբերը սկսեցին գրանցվել՝ համաձայն 24.02.2014թ. թիվ 312 օրենքի և իրավունք ստացան ներդրումային ծրագրեր իրագործելու դեպքում օգտվելու առավել մեծ աջակցությունից (40-50% ավել, քան անհատ ֆերմերները), ինչպես նաև 10%-ով ավելի բարձր ֆինանսական աջակցությունից:

Ի լրումն այս ամենի, 05.08.2016թ. ընդունված թիվ 910 կառավարության որոշմամբ հաստատվեց սուբսիդավորման նոր կարգը: Վերջինիս համաձայն արտադրող խմբերը իրենց գործունեության առաջին 5 տարիների ընթացքում օգտվում են ուղղակի սուբսիդավորման ձևով տրամադրվող ֆինանսական աջակցությունից: Այդ աջակցության չափը որոշվում է հետևյալ կերպ. արտադրողների խումբը/կոոպերատիվը գործունեության առաջին տարում ստանում է համատեղ արտադրված և վաճառված արտադրանքից ստացված հասույթի 5%-ը չափով, գործունեության 2-րդ տարում՝ 4%-ը, 3-րդ տարում 3%-ը և այդպես մինչև 5-րդ տարին ներառյալ:

Ղազախստան

Ղազախստանի Հանրապետությունն անցել է գյուղատնտեսական կոոպերացիայի խթանմանն ուղղված պետական քաղաքականության հետևյալ 2 փուլերով.

- առաջին փուլը՝ 2005-2012թթ՝ գյուղական սպառողական կոոպերատիվներին պետական աջակցության տրամադրման փուլ,
- երկրորդ փուլ՝ 2012-2016թթ՝ կոոպերատիվների զարգացման պետական ընդլայնված քաղաքականության և գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության մեխանիզմների մշակման փուլ:

Կոոպերացիայի խթանման առաջին փուլում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- մշակվել է մատակարարման և մարքետինգային կոոպերատիվների զարգացման գործողությունների ծրագիրը (գյուղատնտեսության նախարարի հրաման N 690, առ 08.12.2005թ.),
- հիմնվել են գյուղատնտեսական արտադրողների միավորումներ (առաջնահերթ միջոցառումների ծրագրի իրականացում 2006-2008թթ Ղազախստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի կայուն զարգացման 2006-2010թթ հայեցակարգի շրջանակներում),
- գյուղական կոոպերատիվներին տրամադրվել են 5% տարեկան տոկոսադրույքով արտոնյալ վարկեր 5-7 տարի ժամկետով (կառավարության թիվ 645 որոշման համաձայն, առ 07.07.2006 թ.):

Գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության և զարգացման պետական քաղաքականության երկրորդ փուլը բնութագրվում է հետևյալ միջոցառումներով.

- Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը 2012թ. և 2014թ. ուղերձներով նախաձեռնեց հետևյալը. «խրախուսել փոքր և միջին բիզնեսների միավորումը կամ դրանց կոոպերացիան, ձևավորել օժանդակության համակարգ, վերացնել գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկատիրության զարգացման բոլոր խոչընդոտները, խթանել գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը և արդյունավետ հողօգտագործումը»,
- «Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին» օրենքի նախագծի մշակումը, որը նպատակաուղղված է խթանելու գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը և զարգացմանը (Ղազախստանի Հանրապետության նախագահի մասնակցությամբ Ղազախստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 14-ի ընդլայնված նիստի արձանագրություն),
- «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի ընդունումը 2015թ. հոկտեմբերի 29-ին, որն ուժի մեջ է մտել 2016թ. հունվարի 1-ից:

«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՂՀ օրենքի ընդունմանը զուգահեռ փոփոխություններ են կատարվել ՂՀ քաղաքացիական օրենսգրքում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին տալով արտադրական կոոպերատիվի իրավական կարգավիճակ, ինչպես նաև ՂՀ հարկային օրենսգրքում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին հատկացնելով հատուկ հարկային ռեժիմ:

Կառավարության վերջին տարիների ծրագրերում ևս արտացոլված է գյուղատնտեսական արտադրողների կոոպերացիայի զարգացման առաջնահերթությունը: Մասնավորապես, «Բիզնեսի ճանապարհային քարտեզ 2020», «Ագրոբիզնես 2020», «Ղազախստանի ռազմավարություն - 2050» ծրագրերը ընդգծում են փոքր և միջին բիզնեսի էական ազդեցությունը ազգային տնտեսության, սոցիալական խնդիրների լուծման, զբաղվածության աճի վրա, ինչպես նաև փոքր, միջին և խոշոր բիզնեսների միջև անհավասարակշռությունը հաղթահարելու նպատակով փոքր և միջին բիզնեսին պետական աջակցության կարևորությունը:

Ղազախստանի Հանրապետության պետական քաղաքականության և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ դրանց ձևավորման և զարգացման տարբեր փուլերում առաջարկվող պետական աջակցության առկա մեխանիզմների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայումս պետությունը ակտիվ միջոցներ է ձեռնարկում գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության կարգավորման և աջակցության համար, սակայն դեռևս դրանց զարգացման կոնկրետ արդյունքներ չկան: Դա պայմանավորված է կոոպերատիվների զարգացման համար նախատեսված ֆինանսական միջոցների սղությամբ, փոքր ֆերմերների միջև կոոպերացիայի գործընթացը համակարգող պատասխանատու մարմնի բացակայությամբ, գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործընթացի համապարփակ մոտեցման, փորձնական ծրագրերի, ինչպես նաև ֆինանսական ու վարկային աջակցման մեխանիզմների անբավարարությամբ:

Հայաստան

ԽՍՀՄ փլուզումից հետո գոյություն ունեցող գյուղատնտեսական կոոպերատիվները հետխորհրդային Հայաստանի այլ կառույցների հետ միաժամանակ նույնպես փլուզվեցին: Նախկինում այդ գյուղատնտեսական կոոպերատիվներում անդամակցությունը պարտադիր էր:

1994թ.-ից սկսած, երբ ընդունվեց «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը, սկսեցին հիմնվել նոր սպառողական կոոպերատիվներ: Վերջին տասնամյակը (և հատկապես վերջին մի քանի տարիները) նշանավորվել է ինչպես կառավարության, այնպես էլ դոնորական համայնքի կողմից անհատ ֆերմերների միջև գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման աճով՝ հիմնականում սպառողական կոոպերատիվների ստեղծման և զարգացման աջակցության եղանակով, որոնք, ըստ էության, շահույթ չհետապնդող գյուղատնտեսական կոոպերատիվներ են:

2015թ. հունվար ամսվա դրությամբ Հայաստանում գրանցված էր շուրջ 400 սպառողական կոոպերատիվ: Այս կոոպերատիվների մեծ մասը հիմնադրվել է պետական զարգացման ծրագրերի և տարբեր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում կոոպերատիվների գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերն են.

- «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-91), առ 30.12.1993թ.,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ՀՕ-239), առ 05.05.1998թ.,
- «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենք (ՀՕ -332), առ 30.04.2002թ.,
- «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-374-Ն), առ 04.06.2002թ.,
- «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-190-Ն), առ 21.12.2015թ.:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. նոյեմբերի 5-ի 1476-Ն որոշմամբ ընդունվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ կայուն զարգացման ռազմավարությունը: Սրանով կառավարությունը նպատակ ուներ հաղթահարել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և ձևավորել հակաճգնաժամային մեխանիզմներ ոլորտի արդիականացման և մրցունակության մակարդակի բարձրացման միջոցով: Արժևորելով գյուղատնտեսության դերակատարությունը երկրի տնտեսության և պարենային ապահովության հարցերում՝ ՀՀ կառավարությունը շեշտադրում է ոլորտում պետական աջակցության անհրաժեշտությունը: Այս ռազմավարության նպատակային ուղղություններից մեկն էլ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումն է:

Կոոպերատիվների խթանման քաղաքականության շրջանակն ամբողջանում է ֆերմերների միջև կոոպերացիայի տարբեր ասպեկտները կանոնակարգող ստորև թվարկված իրավական մի շարք փաստաթղթերով.

- ՀՀ նախագահի 2011թ. մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրությունը (ՆԿ-91-Ն),
- Հ կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի «Հայաս-տանի Հանրապետության պարենային անվտանգության ապա-հովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 6-ի «Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների կողմից կնքվող համատեղ գործունեության պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N1270-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N1476-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների խոշո-

ռացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N43 արձանագրային որոշումը,

• ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 10-Ն որոշումը:

Թեև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի ընդունումը մեծ առաջընթաց էր կարգավորող դաշտի բարեփոխման տեսանկյունից, օրենքի դրույթների իրագործելիության տեսանկյունից հարկավոր է բարեփոխումները շարունակել հարկային դաշտը կարգավորող օրենսդրական ակտերում:

Վրաստան

Վրաստանի կառավարությունը ֆերմերների միջև կոոպերացիայի խթանումը առաջնահերթություն է որակել՝ որպես երկրի գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու հիմնական գործիքներից մեկը և որպես միջոց՝ հզորացնելու անհատ ֆերմերներին:

Վրաստանի գյուղատնտեսության զարգացման 2015-2020թթ ռազմավարության և դրա գործողությունների պլանի ակնկալվող արդյունքներից է պետական աջակցության ցուցաբերումը գյուղական վայրերում գործող փոքր և միջին ձեռնարկություններին, ինչպիսիք են գյուղատնտեսական կոոպերատիվները: Ռազմավարության մեջ նշվում է, որ գյուղատնտեսական կոոպերատիվները կարող են բարձրացնել վրացական ֆերմերների մրցունակությունը՝ մեծացնելով իրենց եկամուտները մասշտաբի էֆեկտի գործողության և մատակարարման շղթաներում ֆերմերների ներգրավման միջոցով:

Կառավարությունը և դոնորական համայնքը համատեղ կոորդինացված ջանքերով աջակցում են գյուղական վայրերում կոոպերատիվների ձևավորմանը՝ կոոպերատիվների ղեկավարությանը և անդամներին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև մեքենաներ և սարքավորումներ տրամադրելու միջոցով:

2013թ. հուլիսին Վրաստանի խորհրդարանի կողմից «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի ընդունումը, դոնորների և կառավարության համատեղ ջանքերը, ինչպես նաև ընդհանուր և տեղայնացված աջակցության հասանելիությունը մեծ ազդեցություն ունեցան գրանցված գյուղատնտեսական կոոպերատիվների քանակի վրա:

Օրենսդրական փոփոխությունները ուղեկցվել են Վրաստանի կառավարության կողմից ընդունված և իրականացվող կոոպերատիվների աջակցության այնպիսի ծրագրերով, ինչպիսիք են.

• Մեղվաբուծությամբ զբաղվող գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության պետական ծրագիրը (կառավարության որոշում N 461, առ 07.09.2015թ.),

• Կաթի արտադրությամբ զբաղվող գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության ծրագիր (կառավարության որոշում N 150, առ 29.03.2016թ.),

• Ինչպես նաև այլ նպատակային ծրագրեր:

Ամփոփելով ծրագրի մեջ ներգրավված բոլոր երկրների փորձը՝ կարելի է փաստել, որ դոնոր կազմակերպությունների աջակցությունը կարևոր դերակատարում է ունեցել կոոպերացիայի փորձի ներդրման, կոոպերատիվների շահերի պաշտպանության և ֆինանսավորման ապահովման գործում: Չնայած սրան՝ չորս երկրները տարբեր մոտեցումներ ունեն՝ դոնոր կազմակերպությունների և իրենց կառավարությունների դերի հետ կապված.

• Հայաստանում կոոպերատիվ շարժման առաջատար դերում դոնոր կազմակերպություններն են, նրանց կողմից իրականացված հիմնական գործողությունները, ինչպես նաև նրանցից բխող նախաձեռնությունները: ԵՄ կողմից ֆինանսավորվող ENPARD ծրագրի շրջանակներում է նախաձեռնվել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» նոր օրենքի մշակումը և ընդունումը 2015թ: Վերջինս սահմանում է գյուղատնտեսական կոոպերատիվների խթանմանն ուղղված առավել ակտիվ և ինքնավարությունն ու կայունությունը խրախուսող մոտեցումներ:

• Վրաստանն ապահովում է դոնորների և կառավարության կոորդինացված հաջող գործունեությունը: Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալության, գյուղատնտեսության նախարարության, ENPARD ծրագրի կոնսորցիումի ներկայացուցիչների կողմից ձևավորված մշտական աշխատանքային խումբը ապահովում է համակարգված գործողությունների արդյունավետությունը:

• Մոլդովայի դեպքում, մինչ դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն և սիներգիաներ ստեղծելու քայլեր են ձեռնարկվում, պետական քաղաքականությունն ինքնավարության տարրեր է դրսևորում՝ կոոպերացիայի զարգացման օրակարգ ձևավորելու և ինքնուրույն ֆինանսական աջակցության ծրագրեր իրականացնելու գործում: Ավելին, կոոպերատիվների զարգացման քաղաքականության իրագործումը Մոլդովայում անմիջականորեն պայմանավորված չէ դոնորների աջակցությամբ:

• Ղազախստանի դեպքում դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված կոոպերացիայի լավագույն փորձի ուսումնասիրությունը կարևոր դեր ունի կոոպերացիայի բնագավառում քաղաքականության մշակման և իրականացման գործում: Դրա իրագործումն ու ֆինանսավորումը, սակայն, ամբողջությամբ ապահովվում է պետական միջոցներով: Այս առումով ֆինանսական հատկացումների հետ կապված միջոցառումների վատ համակարգումը շարունակում է մնալ նախատեսած գործողությունների իրագործման հիմնական մարտահրավերը:

Միայն Վրաստանի դեպքում է, որ ստեղծվել է գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման՝ կառավարության կողմից որդեգրված քաղաքականությունը կյանքի կոչող գործակալություն:

Մոլդովայի և Հայաստանի դեպքում կիրառվում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը, որը լրացվում է դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ֆինանսավորվող ծրագրերի իրագործման գրասենյակների / համակարգող թիմերի կողմից:

Ավելի բարդ իրավիճակ է Ղազախստանի դեպքում: Այստեղ բազմաթիվ կազմակերպություններ են ներգրավված կոոպերացիայի խթանման գործողությունների ու միջոցառումների իրականացման մեջ: Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը և զարգացումը համակարգող մարմնի և համապարփակ մոտեցման պակասը էապես խաթարում է նախանշված արդյունքների ապահովմանը:

Բոլոր չորս երկրներում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման քաղաքականությունների իրականացումը դանդաղել է մի քանի գործոնների պատճառով: Այդ գործոններից են ֆերմերների շրջանում ժամանակակից կոոպերատիվների՝ խորհրդային կոլեկտիվ տնտեսությունների հետ ասոցացումը, կոոպերատիվների կառավարման թույլ կարողությունները, կառավարությունների կողմից՝ կոոպերացիայի խթանմանն ուղղված ջանքերի անբավարար լինելը, ինչպես նաև կառավարությունների և շնորհատու կազմակերպությունների իրագործած ծրագրերում հասանելի և կայուն արդյունքներին ուղղված խրախուսող միջոցառումների պակասը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ 3

Համարժեք իրավակարգավորման դաշտի ստեղծումը կենսական նշանակություն ունի գյուղատնտեսական արտադրողների շրջանում կոոպերատիվների ստեղծումը խթանելու տեսանկյունից: Առանց պատշաճ իրավական դաշտի կառավարության և դոնոր կազմակերպությունների ձեռնարկած միջոցների հնարավոր ազդեցությունները և դրանց որակական ցուցանիշները խիստ սահմանափակ են: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսական արտադրողները սահմանափակված են իրենց միավորման ազատությունը իրացնելու հարցում, ինչպես նաև զրկված են առկա համագործակցությունը իրավական դաշտ բերելու հնարավորությունից և պետության կողմից ոլորտը կարգավորող դաշտից ակնկալվող պաշտպանողական դերից:

Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի և Մոլդովայի գյուղատնտեսական արտադրողների միջև համագործակցության և միավորման իրավակարգավորիչ դաշտերն ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ մի շարք տարբերություններ՝ պայմանավորված անհատական տնտեսական, քաղաքական և բնապահպանական գործոններով: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո այս 4 երկրներն էլ

գյուղատնտեսական ոլորտի գործունեությունը կարգավորող իրավական դաշտ ստեղծելու բացառիկ իրավասություն են ունեցել, որտեղ գյուղատնտեսական կոոպերատիվները և այլ միավորումները, ի թիվս այլ դրույթների, առանձին հոդվածներով կարգավորումներ են ստացել: Բոլոր չորս երկրների օրենսդրություններն էլ կրում են ԱՊՀ տարածքի համար բնորոշ պատմական ընդհանուր՝ խորհրդային անցյալի դրոշմը, որտեղ պետության կողմից վերահսկվող տնտեսության պայմաններում գործում էին 2 տեսակի կոոպերատիվներ՝ սպառողական և արտադրական:

Կարելի է առանձնացնել դիտարկվող երկրներում իրավական դաշտի բարելավման մի քանի կարևոր նախադրյալներ. օրենսդրական դաշտի ընդունման ժամանակահատվածը, կապը գյուղատնտեսության ոլորտում իրագործվող քաղաքականությունների և ֆերմերների միջև կոոպերացիայի աջակցության ծրագրերի միջև, իրավակարգավորիչ դաշտի բնութագիրը, և դրա ճկունությունը՝ բարեփոխվելու գյուղատնտեսական կոոպերատիվների կարիքներին համապատասխան:

Հետազոտվող երկրներից Հայաստանն առաջինն է եղել, որ 1993թ. ընդունել է «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքը: Ղազախստանը 1995թ. ընդունել է «Արտադրական կոոպերատիվների մասին» օրենքը, որը կարգավորում է բիզնես գործունեություն ծավալելու նպատակով քաղաքացիների կամավոր միավորումը, ինչն իրենից ներկայացնում է առևտրային կազմակերպություն: Երկրների մեծ մասում կոոպերատիվներին անմիջականորեն վերաբերող օրենքներն ի հայտ են եկել միայն 2010թ.-ից սկսած: Դրանք ունեն նմանատիպ կառուցվածք և հետապնդում են նմանատիպ նպատակներ:

Հայաստանում, չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսության զարգացումը կառավարության գերակա խնդիրներից մեկն է, գյուղատնտեսության ոլորտը կարգավորող միասնական օրենք գոյություն չունի: Ներկայումս ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով: Գյուղատնտեսության ոլորտը կարգավորող հիմնական օրենքներն են. «Քաղաքացիական օրենսգիրքը», «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքը, «Մենդամթերքի անվտանգության մասին» օրենքը, «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքը, «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքը, ինչպես նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքը, որն ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 21-ին: Վերջինը, թերևս, միակ ամբողջական և համապարփակ օրենքն է, որը կարգավորում է կոոպերատիվների գործունեությունը: Քանի որ այն ուժի մեջ է մտել միայն 2016թ.-ին, այն դեռևս չի կարողացել մեծ ազդեցություն ունենալ գյուղատնտեսական կոոպերացիայի ոլորտի վրա՝ չնայած նրան, որ արդեն 60-ից ավելի գյուղատնտեսական կոոպերատիվներ են գրանցվել: Չնայած կոոպերատիվների զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթ նպատակներից մեկն է, գործող հարկային քաղաքականությունը, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը չեն խթանում կոոպերատիվների ձևավորմանը, գործունեությանն ու զարգացմանը: Հայաստանի գործող օրենսդրության մեջ չկա որևէ իրավական ակտ կամ օրենք, որը կվերաբերի կոոպերատիվների հարկային կամ այլ արտոնություններին: Ավելին, ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող սպառողական կոոպերատիվներն իրավունք չունեն մատակարարելու ապրանքներ կամ մատուցել ծառայություններ կոոպերատիվի անդամ չհանդիսացող անձանց: Վերջինս հաճախ վատթարացնում է սպառողական կոոպերատիվների ծախսաարդյունավետությունը, և, հետևաբար, նրանց կենսունակությունը: Չնայած իրավական կարգավորման հարցում զգալի առաջընթացին, մասնավորապես՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի ընդունմանը, որը մեծապես հիմնված է միջազգային լավագույն փորձի վրա, օրենքն ունի որոշակի անորոշություններ, որոնք խոչընդոտում են կոոպերատիվների գործունեությանը և կայուն զարգացմանը: Մասնավորապես, օրենքում չի նշվում կոոպերատիվների իրավական կարգավիճակը, այսինքն, արդյոք դրանք հանդիսանում են առևտրային, թե ոչ առևտրային կազմակերպություններ: Պետական ռեգիստրը, այնուամենայնիվ, գրանցում է դրանք՝ որպես առևտրային իրավաբանական անձինք: Հետևաբար, նաև հարկային դաշտը, որի շրջանակներում պետք է գործեն կոոպերատիվները, հարմարեցված չի դրանց հետ կապված օրենքների դրույթներին: Չկա նաև տարբերություն ներքին (ոչ առևտրային) և արտաքին գործարքների հետ կապված հարկային քաղաքականությունների միջև:

2013թ. հուլիսին Վրաստանի խորհրդարանը հաստատեց «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքը և եռամյա հարկային արտոնություններ տրամադրեց առաջնային գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող կոոպերատիվներին: Օրենքի ընդունումից ի վեր ավելի քան 1500 ֆերմերային խմբեր գրանցվել են որպես գյուղատնտեսական կոոպերատիվ: Այսպիսով, այս օրենքի շրջանակներում ստեղծված կոոպերա-

տիվների գործունեության պատմությունը 3 տարուց ավելի չէ: Պետք է ենթադրել, որ նշված կարճ ժամանակահատվածում կոոպերատիվների զարգացման մեծ առաջընթաց չի արձանագրվել: Հարկային արտոնությունները կգործեն մինչև 2018թ. հունվարի 1-ը, այնուհետև, հավանաբար, կերկարաձգվեն ևս 3 տարով՝ համաձայն կառավարության որդեգրած գյուղատնտեսության զարգացման ռազմավարության:

Ղազախստանում ստեղծվել է կոոպերատիվների զարգացման լայն իրավական շրջանակ: «Արտադրական կոոպերատիվների մասին» օրենքը կարգավորում է համատեղ բիզնեսի նպատակով քաղաքացիների կամավոր միավորումների գործունեությունը և իրենից ներկայացնում է առևտրային կազմակերպություն: «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքը կարգավորում է սպառողական կոոպերատիվների գրանցումն ու գործունեությունը տնտեսության բոլոր ոլորտներում: Գյուղատնտեսական ծառայություններ մատուցող կոոպերատիվների զարգացման համար Ղազախստանի Հանրապետությունում իրավական հիմք էին ծառայում «Գյուղացիական սպառողական կոոպերացիայի մասին», «Ջրօգտագործողների գյուղացիական սպառողական կոոպերատիվների մասին» և «Գյուղացիական համատեղ գործունեության և ասոցացիաների (միությունների) մասին» օրենքները: Այնուամենայնիվ, չնայած օրենքների բազմազանությանը, կոոպերատիվի շարժումը հավուր պատշաճի չէր զարգանում երկրում, ինչը հիմնականում պայմանավորված էր այդ 5 օրենքներում պարունակվող կրկնվող և միմյանց հակասող դրույթների առկայությամբ, որպես ոչ առևտրային կազմակերպություններ գրանցված կոոպերատիվների շահույթը անդամների միջև բաշխելու անհնարինությամբ, ֆերմերների միավորման տնտեսական խթանների և բարենպաստ միջավայրի (հարկային, ֆինանսական, վարկային, իրավական և այլն) բացակայությամբ: Վերոհիշյալ խնդիրները գիտակցելով՝ մշակվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» նոր օրենք, որը հաստատվել և ուժի մեջ է մտել 2016 թ. հունվարի 1-ից, և որով դադարեցվել է «Գյուղացիական սպառողական կոոպերացիայի մասին», «Ջրօգտագործողների գյուղացիական սպառողական կոոպերատիվների մասին» և «Գյուղացիական համատեղ գործունեության և ասոցացիաների (միությունների) մասին՝ օրենքների գործողությունը: Միաժամանակ գյուղատնտեսական կոոպերատիվներին տրվել է նոր՝ առևտրային կազմակերպության կարգավիճակ, ինչպես նաև կարևորվել է պետության դերը գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հարցում:

Մոլդովայի Հանրապետությունում օրենսդրական դաշտի զարգացման հարցում առկա են որոշակի նմանություններ Ղազախստանի հետ: Այն մի քանի անգամ փոփոխվել է 1992թ-ից ի վեր, երբ ընդունվեց ձեռնարկատիրության մասին առաջին օրենքը, և միայն 2001թ.-ին ընդունված «Բիզնես կոոպերատիվների մասին» օրենքը սահմանեց միավորման գործընթացի հետ կապված առավել ամբողջական դրույթներ: 2013թ. ընդունվեց «Գյուղատնտեսական արտադրողների խմբերի և նրանց միավորումների մասին» օրենքը, որը նախատեսում էր գյուղատնտեսական արտադրողների շրջանում միավորման մի շարք սկզբունքներ:

«Գյուղատնտեսական արտադրողների խմբերի և նրանց միավորումների մասին» N312 օրենքը սահմանում է ֆերմերների խմբերի ձևավորման իրավական հիմքերը: Կոոպերացիայի առավելություններից է այն, որ կոոպերատիվները և միավորումները կարող են արտոնյալ կարգով օգտվել պետական սուբսիդավորման որոշակի ծրագրերից, մինչդեռ դրանք անհատ ֆերմերներին միշտ չէ, որ հասանելի են:

Միևնույն ժամանակ, Մոլդովայի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն ԱԱՀ-ից ազատման արտոնություններ են տրված գյուղատնտեսական ծառայություններ մատուցող կոոպերատիվներին, որոնք հիմնվել են 2001թ. ապրիլի 12-ին ընդունված թիվ 73-XV օրենքի 87 հոդվածի համաձայն՝ իրենց կողմից մատուցված ծառայությունների մասով: ԱԱՀ-ից ազատման արտոնություն է տրված նաև բիզնես կոոպերատիվներին պայմանով, որ կոոպերատիվի կողմից վաճառված ապրանքների և մատուցված ծառայությունների առնվազն 75%-ը պետք է վաճառված/մատուցված լինեն կոոպերատիվի անդամներին և արտադրանքի վաճառքի դեպքում պետք է արտադրված լինեն անդամների կողմից: Մոլդովայի Հանրապետությունում կոոպերացիայի բոլոր առկա ձևերի շարքում արտադրական և ձեռնարկատիրական կոոպերատիվները շարունակում են մնալ ֆերմերների համար առավել նախընտրելի ձևերը՝ ունենալով մի շարք առավելություններ հատկապես փոքր ֆերմերների համար: Օրենսդրական դաշտը, բավականաչափ կարգավորված լինելով նորմատիվային բազայի տեսանկյունից, դեռևս բարելավման տեղ ունի հատկապես հարկային օրենսդրության տեսանկյունից:

4 ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԳԾՈՎ ԱՌԿԱ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ, ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ

Ֆերմերների միջև համագործակցությունը և գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը չորս երկրների դեպքում էլ իրենց վրա կրում են Խորհրդային Միության ժամանակաշրջանի կոլեկտիվ տնտեսությունների բացասական փորձի հետ ասոցացման ազդեցությունը: Դա արտացոլվում է ոչ միայն ֆերմերների գործակցության, այլև քաղաքականության գծով որոշումներ կայացնողների մակարդակում:

Բոլոր չորս երկրները սահմանափակ փորձ ունեն կոոպերատիվների խթանման և զարգացման գործում: Գյուղատնտեսության ոլորտում կառուցվածքային փոփոխությունները նույնպես ունեն նմանատիպ միտումներ և բնութագրվում են այնպիսի երևույթներով, ինչպիսիք են գյուղական բնակչության միգրացիան, հողերի չմշակումը, չափազանց մեծ հողակտորներ տիրապետող ֆերմերային տնտեսությունների ձևավորումը, միաժամանակ բազմաթիվ մանր, սեփական սպառման նպատակով գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսությունների առկայությունը, գյուղական բնակչության ծերացումը, և այլն:

Դոնորների աջակցությունը կարևոր դերակատարություն ունի գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման բոլոր մակարդակներում. կոոպերացիայի ջատագովությունը, քաղաքականությունների զարգացումը, գիտելիքի և նորարարությունների փոխանցումը, դաշտային փորձացուցադրական գործողությունները, աջակցության այլ միջոցներն ու ֆինանսավորումը:

Դիտարկվող չորս երկրներում կոոպերատիվների խթանման և զարգացման գծով հաջողությունների ու ձախողումների հիմնական գործոնների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ օբյեկտիվ գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են պետության կողմից իրագործվող քաղաքականությունները, գյուղատնտեսական արտադրողների սոցիալական և տնտեսական վիճակը, դոնորների գործողությունները և այլն, գերակա է սուբյեկտիվ գործոնների նկատմամբ, ինչպիսիք են մենթալիտետն ու մշակութային գործոնները:

Չորս երկրների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության պատշաճ վերլուծության և կորելացիաների հայտնաբերման ժամանակ հարկավոր է հաշվի առնել կոոպերատիվների վերաբերյալ ընկալումների և մոտեցումների տարբերությունները, որոնք մեծապես կախված են իրագործվող քաղաքականություններից:

Հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կոոպերատիվին անդամակցությունը մեծագույն դրական ազդեցություն է ունեցել ֆերմերների միջև տեղեկատվության փոխանակման և փոխադարձ աջակցության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ֆերմերների գիտելիքի և հմտությունների բարելավման տեսանկյունից: Մյուս կարևոր ազդեցությունը եղել է գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հասանելիության բարելավումը, արտադրության որակի բարձրացումը, ծախսերի կրճատումը և տնային տնտեսությունների եկամուտների ավելացումը:

Կոոպերատիվները փոխում են գյուղացիների կյանքի որակը համայնքներում. նրանք հնարավորություն են ընձեռում իրենց անդամներին ցածր տոկոսադրույքով վարկեր վերցնել, ավելի ցածր սակագներով օգտագործել կոոպերատիվի սարքավորումներն ու մեքենաները, ինչը ձեռնտու է կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի և, որոշ դեպքերում, նաև ողջ համայնքին: Հաճախ կոոպերատիվը հնարավորություն է տալիս նաև համայնքում նոր գյուղատնտեսական գործունեություն սկսելու համար:

Մոլդովայի Հանրապետության դեպքում անհատ ֆերմերի համար հարաբերականորեն հասանելի են գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների ծառայությունները: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական ներդրանքի ձեռքբերման և համատեղ մշակության գործունեությամբ զբաղվող կոոպերատիվներն այստեղ հիմնականում գործում են ոչ ֆորմալ խմբերի ձևով, որոնք կարող են հետագայում հիմք հանդիսանալ կոոպերատիվի ստեղծման համար, սակայն դա հաճախ տեղի չի ունենում: Որպես իրավաբանական անձ՝ կոոպերատիվների գրանցման համար հիմք է հանդիսանում հատուկ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների ձեռքբերումը, ինչպես նաև հետբերքահավաքային և մարքետինգային ենթակառուցվածքներում համատեղ ներդրումների կազմակերպումը:

Վրաստանի դեպքում գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքը չի սահմանափակում կոոպերատիվների գործունեության շրջանակը՝ դա թողնելով կոոպերատիվի անդամ ֆերմերների որոշմանը: Այսպիսով, կոոպերատիվի գործունեության առարկա կարող է դառնալ արտադրության ոլորտը կամ, ինչը Մոլդովայի օրենսդրությունը թույլ չի տալիս: Այնտեղ գյուղա-

տնտեսական արտադրության ոչ բոլոր գործողությունները կարող են դառնալ կոոպերատիվ գործունեության կամ ներդրումների առարկա և դրանք պետք է իրականացվեն անդամների կողմից՝ ինքնուրույնաբար:

Խոսելով յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունների մասին, որոնք կարող են բացասական կամ դրական ազդեցություն ունենալ ֆերմերների կոոպերացիայի վրա՝ կարելի է ասել, որ, օրինակ, Վրաստանի պարագայում, ընդհանուր առմամբ, կոոպերատիվների կառավարման հմտությունը կամ դրա պակասը ամենակարևոր գործոնն է, որը վտանգում է ֆերմերների միջև կոոպերացիայի զարգացման գործընթացը: Ուժեղ և պրոֆեսիոնալ առաջնորդ ունենալը բավարար չէ կոոպերատիվի կայուն զարգացումն ապահովելու համար. այս հարցում կարևոր դերակատարություն ունի առաջնորդի այնպիսի գործելաոճը, որը կապահովի կոոպերատիվի ժողովրդավարական, մասնակցային կառավարումը, արդարությունն և գործունեության թափանցիկությունը:

Հարկ է նշել, որ վերջին 2-3 տարիների ընթացքում Վրաստանում կոոպերատիվների դինամիկ զարգացումը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է եղել ստորև թվարկվածով.

- պետությունը ֆերմերների միջև կոոպերացիան դիտարկել է որպես գյուղատնտեսության ոլորտում իրագործվող քաղաքականության և զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը,
- սիներգիաներ են ստեղծվել կառավարության և դոնոր կազմակերպությունների գործողությունների միջև,
- օրենսդրական դաշտը մշակվել և շարունակաբար բարելավվել է՝ հաշվի առնելով գյուղատնտեսական կոոպերատիվների խթանման քաղաքականության իրագործման ընթացքում ի հայտ եկած կարիքները:

Վրաստանի կառավարությունը արդյունավետ հարթակ է ստեղծել դոնորական համայնքի հետ հաղորդակցման, ինչպես նաև պլանավորվող և իրականացվող աշխատանքների համակարգման համար:

Բոլոր չորս երկրներում պետությունների և դոնորների կողմից իրականացված խոշոր ծրագրերի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծ թվով կոոպերատիվներ ստեղծվել են «թղթի վրա»: Հետագայում, ծրագրերի ավարտից հետո, այդ կոոպերատիվներից շատերը վերակազմավորվել են՝ դառնալով որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, այլ իրավակազմակերպական ձևեր կամ պարզապես լուծարվել են:

Այս առումով Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ ստեղծված կոոպերատիվներին սահմանափակ ժամկետով (1-3 տարի) աջակցության տրամադրումը և դրա դադարեցումը հանգեցնում է բացասական հետևանքների: Հայաստանում կոոպերացիայի խթանման առանցքային դերակատարություն են ունեցել դոնոր կազմակերպությունները, որոնց ծրագրերն ունեցել են սահմանափակ ժամկետներ: Այդ ծրագրերի ավարտն էլ մի շարք խնդիրներ է առաջացրել՝ կապված՝ խորհրդատվական և այլ օժանդակության դադարեցման հետ:

Միևնույն ժամանակ, Վրաստանի և Հայաստանի փորձը մտահոգության տեղիք է տալիս՝ կոոպերատիվների ձևավորման և գրանցման ժամկետների և ձևի հետ կապված: Կոոպերատիվների հիմնման գործընթացը, երբեմն կարծես հարկադրված արագացվում է՝ ծրագրերի կողմից որոշակի նախանշված քանակական չափորոշիչներ ապահովելու համար:

Դիտարկվող երկրներում առկա են ակնհայտ տարբերություններ՝ գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների քանակի հետ կապված: Այսպիսով, հարցված կոոպերատիվների անդամների միջին թվաքանակը Մոլդովայի դեպքում 5-6 ֆերմեր է, Վրաստանում՝ 6-8, և Հայաստանում՝ 30: Մոտ ապագայում Մոլդովայում և Վրաստանում դժվար է ակնկալել կոոպերատիվների անդամների թվաքանակի աճ: Մյուս կողմից, Հայաստանում արձանագրված ցուցանիշը խոսում է արհեստականորեն մեծ քանակությամբ անդամների ներգրավման մասին: Անդամների մեծ քանակ ունեցող կոոպերատիվների հիմնմանը, ինչպես նաև գործող կոոպերատիվում նոր անդամների ընդունմանը խոչընդոտում են հետևյալ գործոնները. համախմբմանը նպաստող թույլ մոտիվացիան, նոր անդամների ընդունման կարգի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը: Կարևորագույն գործոններից մեկը, ինչը պետք է անպայման հաշվի առնել, ֆերմերների կողմից տնօրինվող հողակտորների միջին չափերն են: Որոշակի փոխադարձ կապ կա տնօրինվող հողակտորների չափերի և կոոպերացմանը հակվածության միջև: Մոլդովայի դեպքում խոշոր և մանր ֆերմերները բոլորովին հետաքրքրված չեն միմյանց հետ գործակցությամբ: Խոշոր տնտեսությունների դեպքում տնտեսվարման ինքնավարության բացակայությունը

հիմնական խոչընդոտն է, որը հարկավոր է հաղթահարել: Փոքր գյուղացիական տնտեսությունների դեպքում, որոնք հիմնականում չունեն բիզնես ուղղվածություն, գյուղատնտեսական կոոպերացիան չի ընկալվում՝ որպես իրենց առջև ծառացած մարտահրավերների լուծում: Արդյունքում նրանք առավել հաճախ հակված են այլ որոշումներ կայացնելու. մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի մեծ քաղաքներ կամ այլ երկրներ, վաստակում են գումարներ և փոխանցում իրենց ընտանիքներին՝ որպես եկամտի հավելյալ աղբյուր: Նման իրավիճակի կարելի է հանդիպել նաև Վրաստանում և Հայաստանում:

Հիմնական խնդիրը կայանում է ընկալումների մեջ, թե ինչպես կարող է կոոպերատիվը տնտեսական օգուտներ տրամադրել կոոպերատիվի անդամների համար: Բոլոր չորս երկրների դեպքում փոքր գյուղացիական տնտեսություններն ավելի հակված են կոոպերատիվներ ստեղծելու՝ ստանալով արտաքին աջակցություն դոնորներից կամ կառավարությունից,: Փոքր ֆերմերների հիմնական խնդիրը կոոպերատիվի գործունակությունն ապահովելն է, քանի որ արտադրողների այս խումբը շատ դեպքերում չի կարողանում ապահովել կոոպերատիվի բավարար ֆինանսավորում:

Հայաստանն առանձնահատուկ փորձ ունի փոքր ֆերմերների ներգրավմամբ սոցիալական ուղղվածություն ունեցող կոոպերատիվների խթանման գործում, որտեղ փոխադարձ օգնությունը կոոպերատիվի հիմնական տարրերից մեկն է: Այս փորձը կարելի է հաշվի առնել Մոլդովայի, Ղազախստանի և Վրաստանի առավել կարիքավոր ֆերմերներին և համայնքներին ուղղված համապատասխան միջոցառումների մշակման հարցում:

Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ անդամների մեծ քանակ ունեցող կոոպերատիվները (ինչը հաճախ պարտադրվում է դոնորների նվազագույն պահանջների միջոցով) միշտ չէ, որ ամենահաջողվածն են: Ընդհակառակը, սովորաբար լավագույն արդյունքների են հասնում ճիշտ գաղափարախոսության շուրջ համախմբված, բավականաչափ մոտիվացված գյուղացիների փոքր խմբերը: Հետևաբար, այս իմաստով անհրաժեշտ է, որ կոոպերատիվներին չպարտադրվեն անդամակցության որևէ սահմանաչափեր և նրանք ազատություն ունենան ընդունելու և հեռացնելու այնքան անդամների, որքան ճիշտ են համարում՝ հիմնվելով մասնակցության մակարդակի, մոտիվացիայի և պոտենցիալ ու ներկա անդամների՝ ընդհանուր գործի մեջ ներդրումների վրա: «Որակը քանակից կարևոր է» մոտեցումը պետք է հավասարապես կիրառվի ֆերմերների խմբերի/կոոպերատիվների անդամների քանակի որոշման հարցում, որոնց հետ պետք է աշխատեն դոնորները: Արդյունքում կլինեն ավելի մեծ թվով հաջողված պատմություններ, ինչը կօգնի գյուղատնտեսական կոոպերացիայի գաղափարների առաջխաղացմանը գյուղացիների լայն շրջանակներում:

Գյուղատնտեսական կոոպերատիվներում կանանց դերակատարության հետ կապված որոշակի ընդհանրություններ կան դիտարկվող երկրներում: Հայաստանում և Մոլդովայում անցկացված հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ կանայք ավելի են հակված կոոպերատիվներում երկարաժամկետ համագործակցության:

Գրանցված կոոպերատիվներում կամ ոչ ֆորմալ խմբերում կանանց գործունեության ամենատարածված տեսակները կապված են գյուղատնտեսության մեջ այնպիսի աշխատատար ոլորտների հետ, ինչպիսիք են հատապտուղների կամ բանջարեղենի մշակությունը: Այն իրականացվում է փոքր հողակտորների վրա՝ հիմնականում տնամերձերում: Վրաստանում իրավիճակը մի փոքր այլ է, քանի որ տղամարդիկ ևս ներգրավված են աշխատատար ոլորտներում: Մյուս ընդհանրությունն այն է, որ շատ ավելի քիչ են այն տնային տնտեսությունները, որոնց գլխավորը կանայք են:

Կոոպերացիան կարելի է համարել կանանց տնտեսական և սոցիալական ինտեգրման կարևոր տարրերից մեկը: Կանանց կոոպերատիվների պարագայում կարելի է նկատել առավել մեծ հետաքրքրություն՝ համայնքի սոցիալական խնդիրները լուծելու հարցում:

Միշտ չէ, որ կոոպերատիվների նույնացումը խորհրդային տիպի կոլեկտիվ տնտեսությունների հետ զարգացման խոչընդոտ կարող է հանդիսանալ: Շնորհատու կազմակերպությունների և կառավարությունների կողմից իրականացված իրազեկման բարձրացման և տեղեկատվական միջոցառումները նպաստում են ֆերմերների շրջանում կոոպերացիայի սկզբունքների և արժեքների մասին գիտելիքի ամրապնդմանը: Բացասական ասոցիացիաներ առաջանում են հատկապես տնտեսապես խոցելի խմբերի դեպքում: Բոլոր չորս երկրներում կարիքավոր ֆերմերները կոոպերատիվը ընկալում են որպես ֆերմերներին աջակցելու գործիք:

Կոոպերատիվների զարգացման համար կարևոր մարտահրավեր է հանդիսանում ակտիվների սեփականության վերաբերյալ մտահոգությունները: Բոլոր երկրներում առկա մյուս մտահոգությունն այն է, որ կոոպերատիվների կողմից ստացվող աջակությունը անընդհատ չէ: Մասնավորապես, այս խնդիրը բարձրաձայնվել է Ղազախստանում և Վրաստանում: Հայաստանի դեպքում տարբեր դոնորներ և հասարակական կազմակերպություններ ներգրավված են գյուղատնտեսական արտադրողների աջակցության գործում, և նրանցից յուրաքանչյուրն ունի աջակցության իր սեփական մեթոդաբանությունը: Որոշ դեպքերում ծրագրերի շրջանակներում խոստացված միջոցառումները մասնակիորեն են իրականացվում:

Ղազախստանում և Հայաստանում ֆերմերներն ավելի շահագրգռված են հիմնելու կոոպերատիվներ, սակայն, միևնույն ժամանակ, համախմբման մակարդակը ցածր է և հիմնականում ուղղված է գյուղատնտեսական ակտիվների համատեղ շահագործմանը և գյուղատնտեսական ներդրանքի գնումների գործընթացի համակարգմանը:

Ընդհանուր առմամբ, բոլոր 4 երկրներում կոոպերատիվների ներկա և նախկին անդամները կոոպերացիայի օգուտների շարքում առանձնացնում են ենթակառուցվածքների, սարքավորումների հասանելիությունը, ավելի բարձր եկամուտների ապահովումը, ինչպես նաև վաճառքի բարելավված հնարավորությունները:

Կոոպերատիվում նոր անդամների ներգրավման դժվարությունը պատճառաբանվում է մեծ խմբերով կոոպերացման նկատմամբ ֆերմերների դժկամությամբ: Այս առումով մյուս խնդիրը հաջող մոդելների պակասությունն է: Առաջին փուլում, երբ սկսվում է կոոպերատիվի անդամների համախմբման և համակարգման աշխատանքը և երբ ռիսկերը շատ բարձր են, շատ ֆերմերներ խուսափում են միանալ խմբին: Վերջիններիս վարքագիծը կոոպերատիվի անդամների կողմից նկարագրվում է հետևյալ կերպ. «նրանք ցանկանում են տեսնել, թե ինչ տեղի կունենա մեզ հետ» (Մոլդովայի ֆոկուս խմբի մասնակից, կոոպերատիվի անդամ):

Կոոպերատիվի հիմնման պարագայում հիմնական խնդիրներն են մոտիվացիայի մակարդակի պահպանումը, կոոպերատիվի գործողություններում յուրաքանչյուր անդամի ակտիվ ներգրավումը, հաղորդակցումն ու համակարգումը: Այնպիսի մշակութային գործոններ, ինչպիսիք են վստահությունը, առաջնորդի ազնվությունը, հաղորդակցության կազմակերպումն ու ներքին ժողովրդավարությունը, կոոպերատիվների կայուն գործունեության անհրաժեշտ պայմաններ են բոլոր չորս երկրների համար: Արտաքին աջակցությունը, մասնավորապես՝ խորհրդատվությունը, կարևոր դեր է խաղում մշակութային գործոնների կառավարման հարցում:

Կոոպերատիվների հաջողությունների վրա ազդող գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվներին ուղղված արտաքին աջակցությունը, որոշումների կայացման գործընթացում անդամների մասնակցությունը, ինչպես նաև կոոպերատիվի ղեկավարության նկատմամբ անդամների վստահությունը նախադրյալներ են ստեղծում դրանց կայացման համար:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվները չունեն լավ մտածված և գործնական բիզնես պլաններ, և որ կոոպերատիվի անդամները, ըստ էության, շատ սահմանափակ մասնակցություն ունեն որոշումների կայացման գործընթացում: Կոոպերատիվների անդամները մտահոգված են նաև այն հանգամանքով, որ գյուղերի երիտասարդները լիովին խուսափում են գյուղատնտեսական աշխատանքներից, և անդամների շարքում շատ քիչ են երիտասարդները: Վրաստանում և Մոլդովայում կոոպերատիվում ներգրավվում են շատ մոտ ընկերներ կամ հարազատներ, և նրանք հակված չեն առավել մեծ անդամակցության:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հարցված ֆերմերների միայն փոքր մասը հստակ պատկերացում ունի գյուղատնտեսական կոոպերատիվների սկզբունքների, արժեքների և գաղափարների մասին այնպես, ինչպես դրանք սահմանվում են Կոոպերատիվների միջազգային դաշինքի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից. այն է՝ «Կոոպերատիվն այն մարդկանց ինքնավար ընկերակցությունն է, որոնք կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու նպատակով»:

Մոլդովայում գյուղատնտեսական կոոպերատիվները և հատկապես մարքեթինգային կոոպերատիվները իրենց անդամներին ընձեռում են մի շարք առավելություններ, որոնցից ամենակարևորներն են՝

- իրացման շուկաների և շուկայի վերաբերյալ տեղեկատվության առավել մատչելիությունը,
- գյուղատնտեսական արտադրանքի բարելավված վաճառք, բարձր գներ և գործարքների հուսալիություն
- վաճառվող արտադրանքի քանակի և որակի աճ, ինչը սահմանափակում է փոքր արտադրողների նկատմամբ վերամշակողների և միջնորդների դոմինանտությունը,
- գյուղատնտեսական արտադրության արդիականացման և պարենային համակարգում կոոպերատիվների ինտեգրման հնարավորություն,
- գյուղմթերք արտադրողների համար տեղեկատվության հասանելիություն, ապրանքի մատակարարման շղթայի օղակների ճանաչում. հավելյալ արժեք, վերամշակողների և մատակարարների պահանջներ, մրցակցություն և այլն,
- կոոպերատիվների կողմից տնօրինվող վերամշակող ձեռնարկությունների ստեղծման հնարավորություն:

Այս առավելություններին զուգահեռ, մարքեթինգային կոոպերատիվներն ունեն նաև որոշակի սահմանափակումներ, ինչպիսիք են՝

- որոշումների կայացման դանդաղ գործընթացը,
- կապիտալի ներգրավման դժվարությունների պատճառով ազգային նշանակություն ունեցող մարքետինգային կամ վերամշակող մեծածավալ ձեռնարկությունների ստեղծման անհնարինությունը,
- կոոպերատիվի անդամների կրկնակի հարկումը,
- ԱԱՀ կիրառման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրա հաշվանցումը կոոպերատիվի անդամներին,
- կոոպերատիվի անդամների միջև հարաբերություններում անբավարար թափանցիկությունը,
- կոոպերացիայի առավելությունների մասին ֆերմերների զգալի մասի անտեղյակությունը,
- կոոպերատիվների զարգացման պետական քաղաքականության բացերը և այդ քաղաքականության զարգացման համար հմուտ մասնագետների պակասը:

Ակնհայտ է, որ «վերևից ներքև» մոտեցմամբ կոոպերատիվների ստեղծումը չի կարող կենսունակ լինել: Եվ հակառակը, «ներքևից վերև» մոտեցմամբ ստեղծված կոոպերատիվները հակված են ինչպես ուղղահայաց համագործակցության՝ զբաղվելով գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ և հավելյալ արժեքի ստեղծմամբ, այնպես էլ հորիզոնական համագործակցության՝ ընդգրկելով կոոպերատիվի նոր անդամների և միանալով այլ կոոպերատիվ կառույցների:

Կոոպերատիվները կարող են առանցքային դեր խաղալ փոքր ֆերմերների վաճառքի ներուժի ամրապնդման գործում: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատուժի ցածր արտադրողականությունը, ներդրումային կարողությունների և շուկաների հասանելիության պակասը, ակնհայտ են դարձնում այն հանգամանքը, որ գյուղատնտեսական կոոպերացիան փոքր ֆերմերների գոյատևման միակ լուծումն է:

Կրթական համակարգը՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, միջին մասնագիտական և տեխնիկական կրթությունը, չեն պատրաստում մասնագետներ գյուղատնտեսական կոոպերատիվներում, մարքեթինգային խմբերում կամ այլ տեսակի գյուղատնտեսական միավորումներում աշխատելու համար:

Կոոպերատիվների զարգացմանը խոչընդոտող գործոնների թվում կարելի է առանձնացնել.

- կոոպերատիվի անդամների միջև փոխադարձ վստահության պակաս,
- մեծ ջանքերի անհրաժեշտություն մարդկանց՝ կոոպերացիայի գաղափարին բերելու և համախմբվելու հարցում,
- կոոպերատիվի նպատակներին համահունչ միասնական տեսլականի մշակումը,
- հաջողության պատմությունների պակասը, որը կմոտիվացներ ֆերմերներին միավորվելու հարցում,
- կոոպերատիվի ղեկավարների՝ կառավարման մասնագիտական հմտությունների պակասը,
- կոոպերատիվում որոշումների կայացման գործընթացի դժվարությունը:

Գյուղատնտեսական կոոպերատիվների խթանումը պահանջում է համալիր մոտեցումներ, որոնք կապահովեն աջակցության շարունակականությունը և խթանող միջոցառումների միջև սիներգիաների ստեղծումը:

Հիմնվելով Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ղազախստանի փորձի վրա՝ կարելի է մի շարք դասեր քաղել կոոպերատիվների զարգացման վերաբերյալ.

- Համարժեք իրավակարգավորող դաշտի, արդյունավետ քաղաքականությունների, ինչպես նաև պետական աջակցության ինստիտուցիոնալ շրջանակի առկայությունը մեծ նշանակություն ունի գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման գործում:
- Վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվի կառավարման գործընթացներում անդամների բավարար մասնակցությունը, անդամների վստահությունը ղեկավարությանը և արտաքին աջակցության առկայությունը նշանակալի գործոններ են, որոնք ազդում են կոոպերատիվի անդամների արտադրանքի ավելացման, տնային տնտեսությունների եկամուտների աճի, նոր տեխնոլոգիաներին հասանելիության ապահովման վրա:
- Կոոպերատիվների խթանման ծրագրերում հարկավոր է հաշվի առնել ոչ միայն քանակական չափորոշիչներ, ինչպիսիք են ստեղծվող կոոպերատիվների թիվը, սարքավորումների տրամադրումը և այլն, այլև որակական չափորոշիչներ, ինչպիսիք են կոոպերատիվի անդամների միասնականության մակարդակը, անդամների վրա կոոպերացիայի ազդեցությունը, կոոպերատիվ մշակույթի զարգացումը և այլն:
- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կոոպերատիվի ընդհանուր նպատակների և տեսլականի սահմանմանը: Կոոպերատիվի նպատակները հարկավոր է բաժանել երկու խմբի, որոնցից մեկը կվերաբերի կոոպերատիվի անդամների առաջնային կարիքների բացահայտմանը և դրանց համար կարճաժամկետ ու արագ լուծումներ ապահովելուն, իսկ մյուսը՝ կոոպերատիվի երկարաժամկետ զարգացմանը՝ գիտելիքի բարելավմանը, համատեղ արտադրանքի ապահովմանը, մասնագիտացմանը, վաճառքի համատեղ կազմակերպմանը և այլն:
- Քաղաքականության շրջանակ. հարկավոր է ստեղծել
  - ա) պատշաճ իրավական և նորմատիվային դաշտ՝ նպատակաուղղված կոոպերատիվների գրանցման և գործունեության համար պայմանների ստեղծմանը,
  - բ) քաղաքականության իրագործմանը նպաստող իրավական և նորմատիվային դաշտ՝ նպատակաուղղված կառավարության աջակցության ծրագրերի իրագործման չափանիշների և ենթակառուցվածքների ստեղծմանը:
- Անհրաժեշտ է գյուղատնտեսական կոոպերատիվների հատուկ կարգավորման դաշտ: Իրավական և նորմատիվային դաշտը պետք է հաշվի առնի կոոպերատիվների առանձնահատկությունները, որոնք տարբեր են այլ իրավական կարգավիճակ ունեցող կազմակերպություններից:

- Կոոպերատիվներն իրավական դաշտում պետք է հանդես գան որպես շահույթ հետապնդող կազմակերպություններ, որպեսզի հնարավորություն ունենան ծավալելու տնտեսապես հիմնավորված գործունեություն և կարողանան ներգրավել նոր անդամների:

- Ինստիտուցիոնալ շրջանակ. որպես կանոն, կոոպերատիվներին աջակցման նախագծերը փոխկապակցված չեն և սահմանափակված են ժամանակային տեսանկյունից՝ ներառյալ կոոպերատիվներին առաջարկվող խորհրդատվական աջակցությունը: Միաժամանակ, կոոպերատիվների զարգացման հետ կապված գործողություններում ներգրավված մի շարք հաստատությունները նվազեցնում են այդ գործողությունների արդյունավետությունը, դրանց համակարգումը և առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Հետևաբար, խորհուրդ է տրվում գյուղատնտեսական կոոպերատիվներին շարունակական տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով հիմնել աջակցության գրասենյակ: Այն կարող է ունենալ կոոպերատիվների զարգացման գործակալության կամ այլ իրավական կարգավիճակ, այնպես, որ հնարավորություն ստեղծվի ապահովելու նմանատիպ օժանդակություն: Պետական իրավասու մարմինը կարող է որպես հարթակ ծառայել գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման ծրագրեր իրականացնող դոնորների հետ կապի, դրանց գործողությունների համակարգման և մոնիտորինգի հարցում:

- Ֆինանսների հասանելիություն. աջակցության սխեմաները պետք է հիմնված լինեն հստակ պարամետրերի վրա: Այս ուղղությամբ հիմնական խնդիրը եղել է ձեռնարկված միջոցների և պետության ֆինանսական հնարավորությունների անհամատեղելիությունը և դժվարությունը՝ ապահովելու առաջարկվող ֆինասական աջակցության ծրագրերի շարունակականությունը:

- Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել կոոպերատիվներում կանանց ներգրավմանը: Սա մի կողմից կնպաստի կանանց շրջանում գիտելիքի և հմտությունների տարածմանը, մյուս կողմից, կնպաստի համայնքներում տնտեսական և սոցիալական ներառական զարգացմանն ու առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: